ԴՎԻՆԸ ԱՆՏԻԿ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

Բազմամյա պեղումների և ուսումնասիրությունների շնորհիվ պարզվում է, որ Դվինում բնակավայր է եղել դեռևս մ. թ. ա. III հազարամյակից սկսած։ Մ. թ. ա. X—VIII դդ. Դվինը արհեստագործական ու պաշտամունքային մի նշանակալից կենտրոն էր։ Սակայն մ. թ. ա. VIII դարի առաջին կեսերին այս բնակավայրն ավերվում և հրկիզվում է Արարատյան դաշտ ներխուժած ուրարտացիների կողմից (բլրի կտրվածքի վրա առկա են այդ հրդեհի տվերիչ հետևանքները)։ Այս հանկարծահաս աղետից հետո Դվինում կյանքը մի քանի դարով ընդհատվում է[1]։

Համաձայն հայ պատմիչների հաղորդած տեղեկությունների, մ. թ. ա. IV դարի 30-ական թթ. հայոց արքունիքն Արտաշատից տեղափոխվում է Դվին[2]։ Բայց կյանքն այստեղ վերականգնվել էր ավելի վաղ դեռևս անտիկ դարաշրջանում։ Այդ են ցույց տալիս տարիներ առաջ այստեղ հայտնաբերված անտիկ ժամանակաշրջանի որոշ նյութեր[3], իսկ վերջին տարիների ուսումնասիրությունները հնարավորություն ընձեռեցին ներկայացնելու անտիկ դարաշրջանի Դվինի քիչ թե շատ որոշակի պատկերը։

Մեծ կարևորություն են ներկայացնում Դվինի միջնաբերդում և կենտրոնական թաղամասում հայտնաբերված հելլենիստական ժամանակաշրջանի կարասային թաղումները, անտրկ տիպի խեցեղենը, լծակավոր աղորիքները, խաղող ճզմելու բազալտե սալը, քարե բազմանիստ կնիքները՝ ժամանակաշրջանին բնորոշ իրենց թեմատիկայով, ինչպես և քաղաքի տարածքում պատահականորեն հայտնաբերված մակեդոնական մեկ, Տիգրան II-ի մեկ և հռոմեական Օկտավիանոս Օգոստոս և Դոմիտիանոս կայսրերի դրամները[4]։ Դվինում հայտնաբերվել են նաև Բոսփորյան դրամներ [Ռիսկուպորիդ II-ի (68—92) և Ռիսկուպորիդ VI-ի (318—332)], Միհրի պաշտամունքի հետ կապվող հռոմեական տիպի զոհասեղան, անտիկ շրջանի սյուների գլանների մասեր (նկ. 1), խարիսխներ[5]։

1949 թ. ի վեր Դվին քաղաքի ամբողջ տարածքում հայտնաբերվել և հայտնաբերվում են տեղական սպիտակավուն ավազաքարից պատրաստված տորաձև խարիսխներ[6], որոնց ժամանակագրության և կուլտուր-պատմական պատկանելության հարցը հատուկ ուշադրության է արժանի։ Այդ խարիսխների տորերը՝ հենված հարթ կամ երկաստիճան քառանկյուն սալի վրա, վերին մակերեսին ունեն մի նեղ դարակ (նկ. 2, 3)։ Անտիկ կարաշրջանի համանման խարիսխներ են հայտնաբերվել նաև Արտաշատի, Մոխրաբլրի, Շիրակավանի պեղումներից, ինչպես և Ադրբեջանական ՍՍՀ տարածքում, Վրաստանում։ Տորաձև խարիսխները բնորոշ են հա-

---

1 К. Х. Кушнарева, Древнейшие памятники Двина, Ереван, 1977.

2 «Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1913, գլուխ Ը, էջ 28։ «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», աշխատութեամբ Մ. Աբեղեանի և Ս. Յարութիւնեանի, Տփղիս, 1913, էջ 265։

3 Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 82։ Ա. Ա. Քալանթարյան, Դվինի նյութական մշակույթը IV—VIII դդ., Երևան, 1970, էջ 10։

4 Կ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 82—84։ Գ. Քոչարյան, Դվինի հելլենիստական դարաշրջանի խեցեղենը (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1974, № 5, էջ 82—97)։ Նույնի՝ Դվինից հայտնաբերված արտադրական նշանակությամբ սալ (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1978, № 2, էջ 95—98)։ Ժ. Դ. Խաչատրյան, Հայաստանում հայտնաբերված բազմանիստ կնիքները («Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 1, էջ 271—277)։ Х. А. Мушегян, Денежное обращение Двина по нумизматическим данным, Ереван, 1962, էջ 10, 107։ Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքի հիմնադրման ժամանակի և միջնաբերդի հեթանոսական մեհյանի մասին («Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 2, էջ 44)։

5 Х. А. Мушегян, նշվ. աշխ., էջ 10—11, 108։ Գ. Քոչարյան, Անտիկ դարաշրջանի զոհասեղան Դվինից («Պատմա-բանասիրական հանդես», 1977, № 2, էջ 280—286)։ Կ. Ղաֆադարյան, Ա. Քալանթարյան, Դվինի 1975—1976 թթ. պեղումները (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1978, № 2, էջ 100, տախտ. 3-րդ)։ Վ. Հարությունյան, Դվինի V—VII դարերի ճարտարապետական հուշարձանները, Երևան, 1950, էջ 97։

6 Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, էջ 72, նկ. 45, էջ 129, նկ. 94։

7 Բ. Ն. Առաքելյան, Լատիներեն արձանագրություններ Արտաշատ մայրաքաղաքից («Պատմա-բանասիրական հանդես», 1967, № 4, էջ 302, 305, նկ. 3)։ Г. О. Караханян, Ф. П. Тер-Мартиросов, Раскопки у сел. Ширакаван («Археологические открытия 1977 года», М., 1978, էջ 506—507); И. А. Бабаев, Исследования обществен-



Նկ. 1



Նկ. 2

րևան Կոմմագենեի, Պարթևստանի և Բակտրիայի ճարտարապետական ոճերը։ Աքեմենյան ճարտարապետությունը ևս տալիս է քննվող ձևի խարիսխների բազմաթիվ օրինակներ, մի պարագա, որ մեկ անգամ ևս մատնանշում է տորաձև խարիսխների ծագման ասիական ակունքները[9]։ Այսպես տորաձև խարիսխի մեկ այլ տարբերակ են Դվինում ի հայտ եկած, սպիտակ ավազաքարից պատրաստված գույգ խարիսխները, որոնցից յուրաքանչյուրը կազմված է միմյանց վրա դրված երկուական գլանից. սրանցից ստորինը մեծ է, իսկ վերինը՝ համեմատաբար փոքր և երկուսն էլ ընդգծված անցումներով հենված են քառանկյուն սալաքարի վրա։ Խարիսխներից յուրաքանչյուրը մակերեսի վրա ունի մեկական դարակ (նկ. 4)։ Այստեղից



Նկ. 3

գտնվել են նաև «ատտիկական» ձևի տուֆե խարիսխներ, որոնց գլանները միմյանցից բաժանվում են դարակների և սկոցիաների միջոցով[10] (նկ. 5)։ Նմանաձև խարիսխներ, թե՛ պատահականորեն, և թե՛ in situ, հանդիպում են Պարթևական և Բակտրիա-քուշանական աշխարհում[11]։

Եղած տվյալները վկայում են, որ այսպես տորաձև և «ատտիկական» խարիսխները հիմնականում թվագրվում են մ. թ. ա. III—մ. թ. III դդ. միջև ընկած ժամանակաշրջանով։

ного здания второй половины I в. до н. э.—I в. н. э. на городище Кабала («Советская археология». 1977, № 4, էջ 217—227, էջ 220, նկ. 2)։ А. Апакидзе, Города древней Грузии, Тбилиси, 1968, էջ 39, նկ. 5։

[8] F. K. Dörner, T. Goell, Arsameia am Nymphaios, Berlin, 1963, տախտ. 39, B, 41, Λ, 42, A, նկ. 21, AB, էջ 181, ծան. 56։ Г. А. Пугаченкова, Халчаян, Ташкент, 1968, էջ 48, նկ. 25, էջ 62, նկ. 37_3, էջ 132, նկ. 79։ Նույնի՝ Из истории античной культуры Узбекистана, Ташкент, 1973, էջ 87—89։ Н. Р. Пичикян, Регион распространения и хронология торовидных баз, II Республиканская научная конференция по проблемам культуры и искусства Армении, Тезисы докладов, 1976, էջ 165։

[9] E. Schmidt, Persepolis, I, Chicago, 1953, էջ 145, 149, 153, տախտ. 122։

[10] Վ. Հարությունյան, Նշվ. աշխ., էջ 94, նկ. 37, էջ 95, նկ. 38։

[11] Г. А. Пугаченкова, Халчаян, էջ 132—133, նկ. 79։ Նույնի՝ Из истории античной культуры Узбекистана, էջ 87—90։ D. Schlumberger, Le temple de Surkl-Kotal en Bactrian, III („Journal Asiatique", t. CCXLIII, 1955, № 3, էջ 274, տախտ. II_2); E. Barger, Exploration of Ancient Sites in Northern Afghanistan („Geographical Journal", vol. XCIII, № 5, 1935, էջ 377—391)։

Այդպիսիք կրող բազմաթիվ հուշարձաններում խարիսիների այդ երկու տիպերը հաճախ հանդես են գալիս համատեղ և գբաղեցնում են աշխարհագրական հսկա տարածք, որի շատ հատվածներ ունեն քաղաքական և կուլտուր-պատմական ամենասերտ աղերսներ։ Ուստի բնավ պատահական չէ (տեղական տարբերակներով հանդերձ) տորաձև և «ատտիկական» խարիսխ-

Նկ. 4

ների առկայությունը նաև Հայաստանում։ Այս-ների խարիսխների և գլանի բեկորների գտածոները վկայում են, որ Դվինում եղել են անտիկ դարաշրջանի շինարարական արվեստով կերտված կառույցներ։

Ուշագրավ է նաև այն, որ վաղ քրիստոնեական դարաշրջանի հուշարձաններից Դվինի կաթողիկե եկեղեցուն ևս վերագրում են հեթանոսական ծագում։ Բազմամյա ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ քրիստոնեության մուտքի ժամանակ քանդել են տաճարի արևելյան ուղիղ պատի կենտրոնական մասը և նրա տեղում կառուցել շենքի ընդհանուր քառանկյունի կազմությունից դուրս շեշտված անկյունավոր աբսիդ։ Աբսիդի քարերի վրա նկատվել են նախաքրիստոնեական բնույթի որմնանկարների հետքեր, որոնք չեն կապակցվում միմյանց հետ. քանի որ քարերը բերվել են ավելի հին շինությունից[12]։ Լրացուցիչ նշենք, որ 1965 թ. կաթողիկեի շրջակայքում հայտնաբերվել է ծածկի բազալտե սալ՝ նման Դաանիի Հեթանոսական տաճարի նույնաձև սալերին[13]։ Այս և նման տվյալները վկայում են, որ փաստորեն Դվինը անտիկ ժամանակաշրջանում հանդիսացել է պաշտամունքային մի միջանկյալ օղակ՝ ս. թ. ա. X—VIII դդ. պաշտամունքային կենտրոն Դվինի և V դարի քրիստոնեական կաթողիկոսանիստ Դվինի միջև։

Վաղ միջնադարյան կամ Արշակունյաց շրջանի Դվինի մասին արժեքավոր տեղեկություններ են հայտնում հայ միջնադարյան գրավոր աղբյուրները։ Առաջին տեղեկությունը պատկանում է Մովսես Խորենացուն. «Նա (Խոսրով II Կոտակը — Ռ. Ք.) և զարքունիսն փոխէ վերոյ անտառին յոստ մի, ապարանս հուանաւորս շինեալ, որ ըստ պարսկական լեզուին Դուին կոչի, որ թարգմանի բլուր»[14]։ Դվին անվան ստուգաբանությանն անդրադարձած մասնագետները, ժամանակակից պարսկերենում չհանդիպելով այդպիսի բառի, հնարավոր են գտնում նրա գոյությունը հին պարսկերենում կամ էլ բառի ստուգաբանությունը փորձում են բխեցնել Փոքր Հայքի Դաբանա քաղաքի և նույնիսկ էնեոլիթյան շրջանում բլրի վրա ապրող ցեղի կամ տոհմի անուններից[15]։ Սակայն ուշագրավ է այն վարկածը, ըստ որի Դվին բառը ավանդված է Կասպից ծովից հարավ-արևելք ընկած խիստ որոշակի շրջանի տեղանունների[16]։ Այդ շրջանն այժմ պատկանում է Աստարաբադի նահանգին և համապատասխանում է հին Հիրկանիայի (Վրկանաց աշխարհ) մի մասին։ Այստեղ հայտնի են Գիրա-Դուվին (Girā-duvīn), Լալա-Դուվին (Lalā-duvīn), Սուլթան-Դուվին (Sultān-duvīn), Կաֆիր-Դուվին (Kāfir-duvīn), Սանգ-դուվին (Sang-duvīn)։ Այս բոլոր տեղանունները նշում են արհեստական բլուրներ։ Հին ժամանակներում դրանք կազմել են ամրացված բլուրների մի շարք՝ ընդդեմ հյուսիսային քոչվորների։ Ըստ հայերենի հնչյունական օրենքների, Դուվինը (duvīn) իրանցիներից փոխանցված պետք է տար Դվին (dvīn). Խորենացու

12 Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, էջ 91, 95։ «Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 2, էջ 46—47։ Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Ա, Երևան, 1942, էջ 214։ Ա. Սահինյան, Քասաղի բազիլիկայի ճարտարապետությունը, Երևան, 1955, էջ 230—231։

13 Գ. Գ. Քոչարյան, Ծածկի քարե սալ Դվինից (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1974, № 11, էջ 102—105)։

14 Մովսես Խորենացի, էջ 265։

15 M. J. Saint-Martin, Memoires historiques et geographiques sur l'Armenie, t. I, Paris, 1818, էջ 119։ Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, СПб 1908, էջ 222։ Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, էջ 11։

16 V. Minorsky, Le nom de Dvin („Revue des etudes armeniennes", t. X, fasc. 1, Paris, 1930, էջ 117—120)։

վերոհիշյալ հատվածը լիովին արգարացվում է. Դվին բառը համարվում է ներմուծված հայ Արշակունիների ժամանակ, որպես կուլտուր-տնտեսական տերմին, բերված նրանց նախնիների կողմից իրենց արևելյան հայրենիքից։ Ավելի՝, Յաքուտի աշխարհագրական բառարանում նշվում են Դավին (Davin) գյուղը, Դավին (= Դվին) քաղաքը, որ գտնվում էր Ուստովայում։ Իսկ Ուստովա (Ἀστασένη) նահանգը, պարթևական թագավորության հյուսիս-արևելյան ծայրամասում, Առշակունիների հարստության օրրանն էր, այստեղ էր նրանց հիմնական սրբավայրը՝ Դվին-Ասակ սրբավայրը՝ Տիր աստծուն նվիրված «Երազամոյն» կոչված տաճարով[18]։

Հավանաբար քրիստոնեության բուռն զարգացման շրջանում արդեն նոր դավանանքի կենտրոն՝ հայոց կաթողիկոսների նստավայր դարձած Դվինը ընդմիշտ մոռացության է մատնել իր հեթանոսական պիտակը՝ «Ասաակ» անունը։ Բայց և այնպես այն շարունակել է պահպանվել հայ իրականության մեջ, ի դեմս հայոց հին տոմարի 17-րդ օրվա, որ կոչվել է «Ասաակ»։ Սա նույնպես առնչվում է Տրդատ I-ի գործունեության հետ[19]։ Նշենք նաև, որ հայոց հին տոմարի ամիսների օրանունների մի մասը կապվում է հեթանոսական աստվածների և նրանց պաշտամունքի նշանավոր տեղավայրերի հետ։



Նկ. 5

վայր Ասաակ (Ἀσσακ) քաղաքը, որտեղ պարթևական թագավորության անդրանիկ արքան՝ Արշակը արքա հռչակվեց, այստեղ էր պահպանվում հավերժական կրակը[17]։

Ասաակը «Աշխարհացույցում» Քուստի Խորասան վարչական միավորի մեջ հիշատակվում է «Դվին-Աւաղակ» (պետք է լինի՝ Դվին-Ազաակ)։ Այս և վերոհիշյալ, ինչպես նաև Ագաթանգեղոսի հաղորդած տեղեկությունների հիման վրա գտնում են, որ Տրդատ I-ը, պարթև Արշակունիների տոհմի ավանդույթի համաձայն, սրբազործել է իր գահակալությունը, Արտաշատի հյուսիս-արևելյան արվարձանում հիմնելով Դվին-Ասակ սրբավայրը՝ Տիր աստծուն նվիրված «Երազամոյն» կոչված տաճարով[18]։

Հավանաբար քրիստոնեության բուռն զարգացման շրջանում արդեն նոր դավանանքի

Ուշագրավն այն է, որ հայ մատենագրության մեջ Դվինի տեղանքի մասին պահպանված գրեթե բոլոր հիշատակությունները համախոս են և արդարացնում են վերը շարադրված վարկածի իսկությունը։ Հայ միջնադարյան պատմիչների մի շարք վկայություններից պարզվում է, որ դվին և բլուր հասկացությունները սերտորեն աղերսված են եղել միմյանց, մի դեպքում (Փավստոս Բուզանդ, Թովմա Արծրունի) բլուրն անվանել են դվին, մյուս դեպքում (Մովսես Խորենացի, Վարդան Բարձրաբերդցի) դվին և բլուր հասկացությունները հանդես են գալիս իբրև բառային կամ անվանական հոմանիշներ, մեկը՝ պարսկերեն, մյուսը՝ հայերեն, և փոխարինում են իրար[20]։

17 Նույն տեղում, էջ 18։ Է. Լ. Դանիելյան, Իսիդոր Քարակացու «Պարթևական կայանները» («Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 4, էջ 174)։

18 «Հայ ժողովրդի պատմություն», հատ. I, Երևան, 1971, էջ 761։ J. Marquart, Eranšahr nach der Ceographie des Ps. Moses Xorenac'i. Berlin, 1901, էջ 9, 32—84։

19 Ղ. Ալիշան, Հին հավատք, Վենետիկ, 1910, էջ 158։ «Հայ ժողովրդի պատմություն», հատ. I, էջ 826։

20 Փավստոս Բուզանդ, էջ 28։ Մովսես Խորենացի, էջ 265։ «Թովմայի վարդապետի Արծրունեաց Պատմութիւն տանն Արծրունեաց», ՍՊբ, 1887, էջ 78, 230։ «Մեծին Վարդանայ Բարձրաբերդեցւոյ Պատմութիւն հայոց», ի լոյս էած Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1860, էջ 65։

Դվինի հնավայրը հետաքրքրող գիտնականների բազմամյա ուսումնասիրությունների շնորհիվ կարելի է հանգել այն ընդհանուր հետևության, որ Դվինի տեղավայրը հնում եղել է մի արհեստական բլուր, ուր կյանքը սկիզբ է առել տակավին մ. թ. ա. III հազարամյակում, իսկ մ. թ. ա. X—VIII դդ. այն վերածվել է արհեստագործական ու պաշտամունքային կարևոր կենտրոնի. VIII դարում ժամանակավորապես ընդհատված կյանքն այս բնակավայրում նորից հառնում է անտիկ դարաշրջանում։ Հետագայում, երբ կառուցվում է Արտաշատը, ապա և Դաոնին, Դվինն իր աշխարհագրական գերիշխող դիրքի պատճառով մ. թ. առաջին դարերում ձեռք է բերում կարևոր պաշտպանական նշանակություն հիշյալ երկու արքայական նստավայրերի համար։ Մյուս կողմից, շարունակելով հնից եկող պաշտամունքային կարևոր կենտրոնի ավանդները, ինչպես վկայում են հնագիտական և մատենագրական տվյալները, Դվինը առաջին հայ Արշակունիների ժամանակ դառնում է նաև կրոնական նշանավոր սրբավայր։ Եվ ինչպես Հիրկանիայում, ըստ Մինորսկու, Դվին անվանական բաղադրիչով կազմված տեղավայրերը եղել են պաշտպանական համակարգի արհեստական բլուրներ, իրենց կրոնա-պաշտամունքային համալիրներով, այնպես էլ Հայաստանի նոր տերերը՝ Արշակունիները, իրենց բուն հայրենիքի՝ Պարթևստանի ավանդական օրինակով, քննարկվող հնամենի բլուր-տեղավայրը անվանում են կուլտուր-տեխնիկական նոր տերմինով՝ Դվին, իբրև Սրբազան բլուր և դարձնում պաշտպանական ու պաշտամունքային նշանակալից տեղավայր։ Դվինի հիշյալ նշանակությունն այնքան կարևոր է եղել, որ հետագայում, մ. թ. V դարում, այն դառնում է կաթողիկոսական աթոռանիստ, իսկ ավելի ուշ պետական ու վարչական կենտրոն, Հայաստանի արքայանիստ մայրաքաղաք։

Դվինը լավագույն օրինակն է Հայաստանի պատմա-մշակութային այն նշանավոր և հնամենի կենտրոնների, որոնք սկսած խոր հնադարից մինչև ուշ ժամանակները գոյատևել են գրեթե անընդմեջ և իրենց հնագիտական շերտերի մեջ գրոշմված պահել տարբեր դարաշրջանների պատմության և մշակույթի բնորոշ գծերը, ապացուցելով Հայկական լեռնաշխարհում կուլտուրական կյանքի երկարատև ու անխզելի զարգացումը։

Գ. Գ. ՔՈՉԱՐՅԱՆ

ПАЛЕОНТОЛОГИЧЕСКИЕ НАХОДКИ ИЗ ПЕЩЕРЫ-ОБИТАЛИЩА В КАНЬОНЕ Р. РАЗДАН В ОКРЕСТНОСТЯХ ЕРЕВАНА

Буквально насыщено древностями всхолмленное и изрезанное древнейшими речными потоками пространство, лежащее между современными поселками Зовуни и Канакераван, которые находятся в черте Еревана, на стыке Разданского и Егвардского каньонов. Бурная вулканическая деятельность с плиоцена и вплоть до верхнего плейстоцена привела здесь к образованию на террасах и склонах речных ущелий многочисленных пещер, ниш, навесов, гротов и других лавовых пузырей. Некоторые из этих образований являлись обиталищами гоминида[1].

Палеогеография свидетельствует о прохождении древнего русла р. Раздан по месту расположения пещер Амо-1 и Зовуни. Об этом же говорят обнаруженные во время раскопок 1970—1975 гг. окатанные речные валуны, галечники, крупно- и мелкозернистый речной песок на дне обеих пещер, а также обесцвеченные чехлики одноклеточных водорослей, выявленные на ошлакованных поверхностях пещеры Зовуни. В пещере Амо-1 обнаружены в большом количестве остатки чехликов клещей орнитодорин, она является древнейшим очагом клещевого возвратного тифа. В геологическом отношении район работ сложен в основном из четвертичных образований, в частности из базальтов, туфов, андезитов и рыхлообломочных отложений.

Пещера Амо-1 расположена в 0,7 км севернее с. Зовуни Наирийского района на правом берегу речки Егвард, правого притока р. Раздан, в 500 м выше по течению р. Егвард от места слияния ее с Разданом, в 40 м над урезом речки, в обнажении столбчатых андезито-базальтов Q_2 возраста, в их подошве, на кварцсодержащих андезито-базальтах Q_1 возраста. Объем пещеры 1050 м^3, т. е. это громадная ниша (рис. 1). Разрез пещеры снизу вверх: 1) базальты темно-серые монолитные, 2) суглинки пылеватые с неокатанными валунами туфов ко-

[1] Г. А. Азизян. Следы гоминида в пещере Зовуни,—«Тезисы докладов к IV Всесоюзному совещанию по изучению четвертичного периода», Ереван, 1973, стр. 120.